Կադաստրի կոմիտեի 2023 թվականի բյուջետային հայտի բացատրագիր

Ընդամենը ծախսեր

Աշխատավարձի ֆոնդ

Կոմիտեի համակարգում հաստիքային աշխատակիցների ամսական աշխատավարձի ֆոնդը կազմում է 179,580.0 հազ.դրամ, որից քաղաքացիական ծառայողներինը՝ 110,065.1 հազ.դրամ, այլ պաշտոններինը՝ 69,514.9 հազ.դրամ:

Ընդամենը աշխատավարձի ֆոնդը կազմում է 2,503,113.0 հազ. դրամ:

Պարգևատրումներ, դրամական խրախուսումներ և հատուկ վճարներ

Պարգևատրման ֆոնդը կազմում **560,180.0 հազ. դրամ:**

Քաղաքացիական ծառայողների պարգևատրում

Կոմիտեի համակարգում քաղաքացիական ծառայողների **պարգևատրման ֆոնդը** կազմում է **150,196.0 հազ.դրամ:**

Էներգետիկ ծառայություններ

ՀՀ կառավարության 2005 թվականի ապրիլի 28-ի թիվ 629-Ն որոշմամբ նախատեսված նորմաների համաձայն Կադաստրի կոմիտեի համակարգի գործունեության իրականացման համար **էներգետիկ ծառայությունների գումարը կազմում է՝** *էլեկտրաէներգիայի* – 66,277.0 հազ.դրամ, *ջեռուցման և վառելիքի* – 48,228.5 հազ.դրամ, **ընդամենը – 114,506.5 հազ.դրամ:**

Կոմունալ ծառայություններ

Ջրամատակարարման և ջրահեռացման ***ծախսեր***

Կադաստրի կոմիտեի համակարգի ջրամատակարարման և ջրահեռացման ծառայությունների ծախսը՝ 1,509.5 հազ.դրամ:

Դեռատիզացիայի ծախսեր Դեռատիզացիայի ծախսերը հաշվարկվել են հիմք ընդունելով կնքված պայմանագրերը՝ ընդամենը ծախսերը կկազմեն 500.0 հազ.դրամ:

Ընդամենը կոմունալ ծառայությունների գումարը կազմում է 2,009.5 հազ.դրամ:

Կապի ծառայությունների վճար

Կադաստրի կոմիտեի համակարգի կապի ծառայության ծախսերը հաշվարկվել են ՀՀ կառավարության 2004 թվականի դեկտեմբերի 30-ի թիվ 1956-Ն որոշման պահանջների համաձայն՝ գումարը կազմում է **ընդամենը 12,500.0** հազ.դրամ:

Ապահովագրական ծախսեր

Կադաստրի կոմիտեի համակարգի 25 ծառայողական մեքենաների ապահովագրական ծախսերի համար անհրաժեշտ է **1,500.0** հազ.դրամ:

Գույքի և սարքավորումների վարձակալության ծախսեր

Շենքերի շինությունների վարձակալության ծախսերը նախատեսված են համաձայն սպասարկման գրասենյակների և տարածքային ստորաբաժանումների կողմից կնքված տարածքների վարձակալության պայմանագրերի՝ գումարը կազմում է **10,744.0** հազ.դրամ:

Արտագերատեսչական ծախսեր

Կոմիտեի համակարգի տարածքային ստորաբաժանումներում և սպասարկման գրասենյակներում /կադաստրային ինֆորմացիայի, գույքի և սարքավորումների պահպանման համար/ պահպանության պայմանագրերի գումարը կազմում է **ընդամենը՝ 1,020.0** հազ. դրամ:

Գործուղման ծախսեր

Արտասահմանյան գործուղումների ծախսեր

2023 թվականին Հայաստանի Հանրապետությունից դուրս պլանավորվում է 10 գործուղում՝ 3-5 օր տևողությամբ:

Նախատեսվում են գործուղումներ հետևյալ երկրներ՝ Ռուսաստանի Դաշնություն, Բելառուսի Հանրապետություն, Ամերիկայի Միացյալ Նահանգներ, Նիդերլանդների Թագավորություն, Մալթայի Հանրապետություն, Կորեայի Հանրապետություն, Շվեդիայի Թագավորություն, Գերմանիայի Դաշնային Հանրապետություն, Նորվեգիայի Թագավորություն և Լեհաստանի Հանրապետություն:

Հանրապետությունից դուրս գործուղման ծախսերը կատարվում են հետևյալ ուղղություններով՝ ճանապարհածախս, օրապահիկ, գիշերավարձ, ներքին տրանսպորտ:

Ռուսաստանի Դաշնություն - 3 օր երեք անձ

օրապահիկ 171x3x3= 1539$

գիշերավարձ	304x3x3 = 2736$
ներքին տրանսպորտ	100x3= 300$
ճանապարհածախս	250x3= 750$
ընդամենը	5325$

Բելառուսի Հանրապետություն - 3 օր երկու անձ

օրապահիկ	89x3x2= 534$
գիշերավարձ	166x3x2= 996$
ներքին տրանսպորտ	100x3= 300$
ճանապարհածախս	160x3= 480$
ընդամենը	2310$

Ամերիկայի Միացյալ Նահանգներ - 5 օր երկու անձ

օրապահիկ	129x5x2= 1290$
գիշերավարձ	249x5x2= 2490$
ներքին տրանսպորտ	110x2= 220$
ճանապարհածախս	1000x2= 2000$
ընդամենը	6000$

Նիդերլանդների Թագավորություն - 5 օր ութ անձ

օրապահիկ	137x5x8 = 5480$
գիշերավարձ	155x5x8 = 6200$
ներքին տրանսպորտ	100x8 = 800$
ճանապարհածախս	500x8 = 4000$
ընդամենը	16480$

Մալթայի Հանրապետություն – 3 օր երկու անձ

օրապահիկ	115x3x2= 690$
գիշերավարձ	130x3x2=780$
ներքին տրանսպորտ	100x2= 200$
ճանապարհածախս	500x2 = 1000$
ընդամենը	2670$

Հարավային Կորեա - 4 օր երկու անձ համար

օրապահիկ	195x4x2= 1560$
գիշերավարձ	195x4x2= 1560$

ներքին տրանսպորտ	100x2= 200$
ճանապարհածախս	600x2= 1200$
ընդամենը	4520$

Շվեդիայի Թագավորություն - 4 օր երկու անձ

օրապահիկ	196x4x2 = 1568$
գիշերավարձ	334x4x2 = 2672$
ներքին տրանսպորտ	100x2 = 200$
ճանապարհածախս	600x2 = 1200$
ընդամենը	5640$

Գերմանիայի Դաշնային Հանրապետություն - 3 օր երկու անձ

օրապահիկ	127x3x2 = 762$
գիշերավարձ	175x3x2 = 1050$
ներքին տրանսպորտ	100x2 = 200$
ճանապարհածախս	600x2 = 1200$
ընդամենը	3212$

Նորվեգիայի Թագավորություն - 4 օր երկու անձ

օրապահիկ	193x4x2 = 1544$
գիշերավարձ	193x4x2 =1544$
ներքին տրանսպորտ	100x2 = 200$
ճանապարհածախս	500x2 = 1000$
ընդամենը	4288$

Լեհաստանի Հանրապետություն 3 օր երկու անձ

օրապահիկ	126x3x2 = 756$
գիշերավարձ	161x3x2 =966$
ներքին տրանսպորտ	100x2 = 200$
ճանապարհածախս	500x2 = 1000$
ընդամենը	2922$

Միջին ծախսը կազմում է **53,367$**

53,367$ x 482,5 դրամ = **25,749,577** դրամ:

Արտասահմանյան գործուղումների գծով ծախսերը նախատեսվում է իրականացնել 2023թ. տարվա պետական բյուջեով 1185 ծրագրի 11002

«Արտասահմանյան պաշտոնական գործուղումներ» միջոցառման համար նախատեսված միջոցների հաշվին:

Ներքին գործուղման ծախսերը կազմում են 3.000,0 հազ.դրամ:

Ընդամենը գործուղման ծախսերը կազմում են 3.000,0 հազ.դրամ:

Վարչական ծառայություններ

Պատճենահանման, թարգմանչական, գործավարական և այլ վարչական ծառայություններ համար նախատեսվում է **ընդամենը 500.0 հազ.դրամ**:

Տեղեկատվական ծառայություններ

Նախատեսվում է կատարել հասարակության իրազեկման ծառայությունների իրականացում (բուկլետների տպագրում, թերթերի, ամսագրերի բաժանորդագրություն, թերթերում և այլ ՁԼՄ-ներուն հայտարարությունների հրատարակում, գովազդ, տպագրություն)՝ **ընդամենը 8,000.0 հազ.դրամ**:

Ներկայացուցչական ծախսեր

Կադաստրի կոմիտեն համագործակցում է մի շարք երկրների և միջազգային կազմակերպությունների հետ, որի համար նախատեսվել է **500,0 հազ.դրամ**:

Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ

Տարածքային ստորաբաժանումներում ազդարարական, հակահրդեհային անվտանգության, թվային տեսահսկման համակարգերի տեղադրման, տեսահսկման համակարգերի սպասարկման և այլ ծառայությունների համար նախատեսվում է **24,000.0 հազ.դրամ**:

Մասնագիտական ծառայություններ

ՀՀ կառավարության 18.11.2021թ.-ի N 1902-Լ որոշման Հավելված N 1 հաստատված Կադաստրի կոմիտեի միջոցառումների 4.3 (ՀՀ համայնքների կադաստրային թաղամասերի ուղղման նպատակով լրացուցիչ կետերի դիտարկում) 20,000 հազ. դրամ, ՀՀ կառավարության 18.11.2021թ.-ի N 1902-Լ որոշման Հավելված N 1 հաստատված Կադաստրի կոմիտեի միջոցառումների 7.1 (Նոր ձևաչափով՝ տպագիր բազմալեզու, ինչպես նաև համացանցում տեղադրված հնարավորությամբ ատլաս) կետի իրականացման ծախսեր 20,000 հազ. դրամ, ՀՀ կառավարության 18.11.2021թ.-ի N 1902-Լ որոշման Հավելված N 1 հաստատված Կադաստրի կոմիտեի միջոցառումների 10.5 (Յուրաքանչյուր պետական մարմնի պահանջմունքներին համապատասխանող առցանց մատուցվող ծառայության ներդրում) կետի

իրականացման ծախսեր 25,000 հազ. դրամ, տեղեկատվական տեխնոլոգիաների հետ կապված ծառայություններ (հերթի կառավարման համակարգերի սպասարկում) 7,100 հազ. դրամ, կահույքի վերանորոգման-պահպանման ծառայություններ 3,000 հազ. դրամ, ներքին աուդիտի ծառայություններ 5,000 հազ. դրամ, գրասենյակների մաքրման ծառայություններ 33.000 հազ. դրամ, ARPIS էլեկտրոնային համակարգի ծրագրային ապահովման մշակման և սպասարկման ծառայություններ 45,000 հազ. դրամ, գլխավոր սերվերի ծրագրային ապահովման և սպասարման 35.000 հազ. դրամ, օպերացիոն համակարգերի բարելավման համակարգչային ծրագրային փաթեթների մշակման ծառայություններ 25.000 հազ. դրամ, և այլ մասնագիտական ծառայությունների իրականացման աշխատանքների ծախսերը կազմում են **278,980.0 հազ.դրամ**:

Շենքերի և կառույցների ընթացիկ նորոգման, պահպանման ծախսեր

Նախատեսվում է կատարել կոմիտեի սպասարկման գրասենյակների վարչական տարածքների ընթացիկ նորոգման աշխատանքներ՝ **3,000.0 հազ.դրամ:**

Մեքենաների և սարքավորումների ընթացիկ նորոգման ծախսեր

Նախատեսվում է կատարել ընթացիկ նորոգման աշխատանքներ՝ ավտոմեքենաների 7,200.0 հազ.դրամ, համակարգչային տպիչ, պատճենահանման և այլ սարքավորումների, օդորակիչների սպասարկման և սերվերային սարքավորումների սպասարկման համար՝ 23,000.0 հազ.դրամ, **ընդամենը՝ 30,200.0 հազ.դրամ**:

Գրասենյակային ապրանքների և նյութերի ձեռք բերման ծախսերը

Նախատեսվում է ձեռք բերել թուղթ, տոներ, քարթրիջ, թմբուկ, գրենական պիտույքներ՝ **44,000.0 հազ.դրամ**:

Տրանսպորտային ծախսեր

Կոմիտեի համակարգում հաշվառված 21 ծառայողական մեքենաների համար նախատեսվում է ձեռք բերել բենզին, յուղեր, ավտոդողեր, այլ նյութեր:

Ընդամենը ծախսը կազմում է **20,000.0 հազ.դրամ**:

Կենցաղային և հանրային սննդի նյութեր

Տնտեսական ապրանքներ, մաքրիչ, սանիհիգիենիկ և այլ նյութեր ձեռքբերելու համար նախատեսվել է **6,000.0 հազ.դրամ**:

Պարտադիր վճարներ և տույժեր

Միասնական տեղեկանքի, գույքի նկատմամբ իրվունքների պետական գրանցման, պարտադիր վճարների, տուրքերի, տեխզննման, բնապահպանության, աղբահանության համար նախատեսված է **5,590.0 հազ.դրամ:**

<u>Կառավարման մարմինների գործունեության հետևանքով առաջացած վնասվածքների կամ վնասների վերականգնում</u>

Կոմիտեի գործունեության հետևանքով առաջացած վնասների վերականգնման համար նախատեսվում է **5,000.0 հազար դրամ**:

<u>Վարչական սարքավորումներ</u>

Ամբողջ համակարգի տեխնիկական ապահովման և վերազինման նպատակով նախատեսվում է իրականացնել **200,000.0 հազ.** դրամի գնումներ:

<u>Ոչ նյութական հիմնական միջոցներ</u>

ՀՀ կառավարության 18.11.2021թ.-ի N 1902-Լ որոշման Հավելված N 1 հաստատված Կադաստրի կոմիտեի միջոցառումների 13.2 կետի իրականացման համար անհրաժեշտ է ձեռք բերել ծրագրային ապահովում **60,000.0 հազ.** դրամի չափով:

<u>Գեոդեզիական քարտեզագրական ծախսեր</u>

ՀՀ կառավարության 18.11.2021թ.-ի N 1902-Լ որոշման Հավելված N 1 հաստատված Կադաստրի կոմիտեի միջոցառումների 1.4 (Պիլոտային ոլորտային կադաստրի ստեղծում և ներդրում), 3.2 (Երկրատեղեկատվական համակարգում ՀՀ բնակավայրերի քարտեզագրական հենքի ստեղծման աշխատանքներ) և 4.2 (ՀՀ օրթոֆոտոհատակագծերով ծածկված համայնքների կադաստրային քարտեզների ճշգրտման աշխատանքների) կետերի իրականացման համար նախատեսվում է գեոդեզիական աշխատանքների իրականացում (Ծրագրերը կցվում են)՝ **578,678.6 հազ.դրամ**: